12. Ձևակերպվել և ռեկտորի հաստատմանն են ներկայացվել համապատասխան հրամաններ /ասպիրանտների և հայցորդների շարժի հետ կապված, ազատման, ակադեմիական արձակուրդից վերականգնման, կրթաթոշակների նշանակման, փոխադրման/:

13. Կազմակերպվել է հայցորդների ուսման տարեկան վարձերի ժամանակին գանձումը /համալսարանի հաշվապահության հետ համատեղ/:

14. Ստուգվել և համալսարանի գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացվել ասպիրանտների և հայցորդների աշխատանքային անհատական պլանները:

15. Ըստ բաժանմունքների և ամբիոնների՝ տրամադրվել են բոլոր հրամանների քաղվածքները:

16. Մայիս-հունիս ամիսներին համապատասխան ամբիոններ են ուղարկվել գրություններ՝ հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված ուսումնական ծանրաբեռնվածությունների մասին:

17. Մահմանված կարգով ընթացքավորվել են բաժնի գործառույթների շրջանակում ստացած դիմումները, կազմվել և տրամադրվել են անհրաժեշտ տեղեկանքներ, ասպիրանտների և հայցորդների հանձնած որակավորման ստուգարք- քննությունների մասին ամփոփագրեր:

18. Համակարգվել է ասպիրանտուրայի ուսումնական գործընթացին մասնակցող ԱրՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը:

19. Կոորդինացվել են ամբիոնների լաբորանտների աշխատանքները ասպիրանտների և հայցորդների մասով, և ցուցաբերվել նրանց մեթոդական օգնություն:

20. Դեկանատների և ամբիոնների վարիչների միջոցով կազմվել է ասպիրանտուրայի ընդունելության հայտ՝ ԱՀ ԿԳՄ նախարարություն ուղարկելու համար:

21. Աշխատանք է տարվել համալսարանում կազմակերպված գիտաժողովների, աշխատա- ժողովների մասնակիցների կողմից ներկայացվող հոդվածների, նյութերի հավաքագրման գործընթացի ուղղությամբ:

22. Իրականացվել են աշխատանքներ ԱրՊՀ-ում կազմակերպված գիտաժողովներին ՀՀ և արտերկրների բուհեր մասնակցությունն ապահովելու ուղղությամբ:

23. Կազմվել են ԱրՊՀ ընթացիկ և տարեկան հաշվետվությունները:

## ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

### Վարիչ՝ Մինասյան Հասմիկ Ջուլջուղի, կ.գ.թ., դոցենտ

2019/20 ուս. տարվա ընթացքում, համաձայն համալսարանում գործող կարգի, Որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ ՈԱԿ) իր առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման համար կազմակերպել է հետևյալ աշխատանքները.

1. Համապատասխան կարգի համաձայն՝ համակարգչային ծրագրի միջոցով իրականացվել է ԱրՊՀ ամբիոնների կողմից ներկայացված 222 ավարտական աշխատանքների, առկա ուսուցման 170 և հեռակա ուսուցման 16 մագիստրոսական թեզերի վերնագրերի և գրագողության նկատմամբ վերահսկողություն: Ստուգման արդյունքում մի քանի թեմաների վերնագրեր փոփոխվել են: Համապատասխան եզրակացություններն ուղարկվել են ամբիոններ:

2. Մշտադիտարկման նպատակով առաջին կիսամյակում կատարվել են հարցումներ՝ պարզելու. ա) պրոֆեսորադասախոսական անձնակազմի բավարարվածության աստիճանը բուհում կազմակերպվող հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից, բ) պրոֆեսորադասախոսական անձնակազմի բավարարվածության աստիճանը բուհի ռեսուրսներով ապահովվածությունից, գ) ուսանողների մասնակցության աստիճանը բուհի կառավարման գործընթացներին, դ) ուսանողների տեղեկացվածության աստիճանը բուհի կառավարման գործընթացներից, ե) ուսանողների տեղեկացվածության աստիճանը բուհի ռեսուրսներով ապահովվածությունից, զ) ուսանողների բավարարվածության աստիճանը բուհի ռեսուրսային ապահովվածությունից, է). ուսանողների բավարարվածության աստիճանը բուհի կողմից տրամադրվող լրացուցիչ պարապմունքներից և խորհրդատվությունից: Հարցման արդյունքները պահպանվել են համալսարանի ներքին ինֆորմացիոն ցանցում: Կատարվել են հարցումների արդյունքների վերլուծություններ:

3. ՈԱԿ-ը շարունակել է ԱրՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի նախապատրաստական աշխատանքների իրականացումը: Մասնավորապես, կազմվել են 2019-23 թթ. ռազմավարական ծրագրից բխող գործողությունների իրականացման պլան-ժամանակացույցներ՝ պատասխանատու անձանց և ստորաբաժանումների համար:

4. Բաժնի կողմից ամբողջացվել է որակի ապահովման գործիքակազմի համակարգը, որտեղ ներառվել են ինչպես ամենամյա աշխատանքային, այնպես էլ ԱրՊՀ ռազմավարական ծրագրի նպատակների գնահատման գործիքներ:

5. Բաժինը նաև համալրվել է ԱրՊՀ որակի ապահովման ձեռնարկով, որտեղ ներկայացվել են ԱրՊՀ որակի ապահովման քաղաքականությունը, հիմնական գործընթացները և պարբերականությունը:

6. ՈԱԿ-ը հաշվետու տարում նաև իրականացրել է աշխատանքային պլանով նախատեսված դասալուծումներ: Դրանց ընդհանուր նպատակները հաստատվել են ամփոփիչ արձանագրություններում:

## ՓՈՐՁՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺԻՆ

### Բաժնի պետ՝ Հայրապետյան Անուշ Վաչագանի

2018-2019 ուսումնական տարում բաժինը կազմակերպել է ուսումնական պլաններով նախատեսված բակալավրի ուսումնական՝ /21 հատ/, մանկավարժական՝ /26 հատ/, արտադրական՝ /9 հատ/ և մագիստրատուրայի գիտամանկավարժական՝ /20 հատ/, 76 փորձուսուցում, որի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Կազմվել է ուսումնական տարվա փորձուսուցման գրաֆիկը,
2. Ամբիոնների հետ հստակեցվել են փորձուսուցման վայրերը,
3. Կնքվել են պայմանագրեր ԱՀ տարբեր գերատեսչությունների, հիմնարկ ձեռնարկությունների, բանկերի, հանրակրթական հաստատությունների հետ,
4. Փորձուսուցում մեկնող ուսանողների հետ կազմակերպվել են կողմնորոշիչ և ամփոփիչ կոնֆերանսներ, ժողովներ,
5. կազմակերպվել են հանդիպումներ փորձուսուցման ղեկավար-մեթոդիստների հետ,
6. Վերահսկվել է փորձուսուցման ողջ գործընթացը,
7. Կազմվել են փորձուսուցման հետ կապված բոլոր հաշվետվությունները:



**ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**  
*Բաժնի պետ՝ Առուշանյան Եղիշե Զավենի*

2019-2020 ուսումնական տարում հրատարակչության աշխատանքները կազմակերպվել են՝ համաձայն կազմված պլանի, նպատակ ունենալով ապահովել համալսարանի համար անհրաժեշտ բոլոր տեսակի դասամատյանների, արձանագրությունների մատյանների, համալսարանի աշխատանքները բնականոն կազմակերպելու համար փաստաթղթերի, տոմսերի, թեստերի, պատվոգրերի, շնորհակալագրերի, բլանկների, դիպլոմների միջուկների ձևավորումը, տպագրությունն ու պատճենահանումը:

Հրատարակչությունը կատարում է մագիստրոսական, ավարտական, կուրսային աշխատանքների ձևավորման և տպագրման, ինչպես նաև գունավոր տպագրության ու լամինացիայի աշխատանքներ: Հրատարակչությունում տպագրվել են «Արցախի համալսարան», «Քո ժամանակը» ամսաթերթերը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր. Հասարակական գիտություններ», «ԱրՊՀ գիտական տեղեկագիր. Բնական գիտություններ» հանդեսները, գիտաժողովների նյութերի ժողովածուները, գիտխորհրդի կողմից հաստատված գիտական, գիտամեթոդական, ուսումնամեթոդական աշխատանքները:

Հրատարակչությունը կատարում է նաև ԱրՊՀ 50-ամյակին նվիրված «Արցախի ժողովրդագրությունը» մատենաշարի նյութերի համակարգչային հավաքման ու տեխնիկական խմբագրման աշխատանքները:

Բաժնի կողմից տպագրության է պատրաստվել ԱրՊՀ հավատարմագրման համար անհրաժեշտ նյութերը, Արցախի պետական համալսարանի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ժողովածուն, ուղեցույցներ, պլաններ, այլ նյութեր:

Հրատարակչությունը կատարել է նաև 1361700 դրամի վճարովի ծառայություն:

**ԿԱՂՐԵՐԻ ԲԱԺԻՆ**  
*Բաժնի պետ՝ Միքայելյան Կարինե Լևոնի*

2019-2020 ուսումնական տարում բաժնի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Ձևակերպվել է 207 հրաման՝ աշխատանքի ընդունման, ազատման, տեղափոխման, աշխատանքային արձակուրդների, չվճարվող արձակուրդների, խրախուսման, պարգևատրման, տույժի, փորձուսուցման և այլնի մասին: Հրամանների քաղվածքները բաժանվել են համապատասխան ֆակուլտետների ղեկնատներին, ամբիոններին և մյուս ստորաբաժանումներին, դրանց բովանդակությանը ծանոթացվել են համապատասխան անձինք:
2. Կնքվել է 299 աշխատանքային պայմանագիր.
3. Գրանցվել է 440 դիմում և ներկայացում.
4. Լրացվել է 305 տեղեկանք, 90 անաշխատունակության թերթիկ, 40 գործուղման թերթիկ.
5. Աշխատանքի է ընդունվել 20 հիմնական և 106 ժամավճարային հիմունքներով աշխատող.
6. Իրենց դիմումների համաձայն աշխատանքից ազատվել են 15, պայմանագրի ժամկետը լրանալու հետ կապված՝ 6, թոշակային տարիքի հետ կապված՝ 8, մահվան հետ կապված՝ 4 անձինք:
7. Նոր հիմնական աշխատանքի ընդունվողներից պահանջվել են աշխատանքային գրքույկներ, կատարվել գրառումներ: Գրառումներ են կատարվել նաև տարակարգերի փոփոխման, տեղափոխությունների, աշխատանքից ազատվողների աշխատանքային գրքույկներում.
8. ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն է ներկայացվել տեղեկություններ համալսարանի աշխատակազմի մասին.
9. Կազմվել է աշխատողների աշխատանքային արձակուրդների ժամանակացույցը:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ**  
*Բաժնի պետ՝ Սվետլանա Վլադիմիրի Հարությունյան*

2019-2020 ուսումնական տարում ԱրՊՀ ընդհանուր բաժնի փաստաթղթերի ընդունման և հաշվառման ցուցանիշներն են .

Ելից գրությունների մատյանում գրանցվել է 233 գրություն, որից փոստային առաքանու առաքման միջոցով հանրապետությունից դուրս առաքվել է 106 (փոստային առաքանու միջոցով առաքված 106 գրությունից 91-ը ուղարկվել է նաև էլեկտրոնային տարբերակով), ԱրՊՀ ցրիչի միջոցով՝ 127 գրություն:

Փոստային առաքանու միջոցով առաքվել է դեկանատների կողմից տրամադրված 18 ծանուցագիր:

Մտից գրությունների մատյանում գրանցվել է 278, ներկայացումների, զեկուցագրերի և միջնորդագրերի մատյանում՝ 478 գրություն, դիմումների գրանցման մատյանում՝ 1941 դիմում և ներկայացվել մակագրության ու հանձնվել համապատասխան բաժիններ:

Ըստ արխիվում պահպանված տվյալների՝ տրամադրվել է շրջանավարտների ուսումնառության տարիների՝ 94 և աշխատած տարիների վերաբերյալ՝ 10 տեղեկանք:

### **ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ** **Կենտրոնի ղեկավար՝ Վարդանյան Նարինե Եղիազարի**

2019-2020 ուստարում Հայագիտական կենտրոնը կատարել է հետևյալ աշխատանքները.

1. 2019թ. հոկտեմբերի 21-ին կենտրոնի նախաձեռնությամբ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող, արևելագիտության ֆակուլտետի դասախոս, պ.գ.թ., դոցենտ Սարգիս Գրիգորյանը Արցախի պետական համալսարանում հանդես է եկել «Սիրիական հակամարտության ներկայիս իրողությունները և թուրքական ռազմական գործողությունները Սիրիայում» դասախոսությամբ:
2. 2020թ. սեպտեմբերի 11-ին ԱրՊՀ հայագիտական կենտրոնի նախաձեռնությամբ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող, միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դասախոս, պ.գ.թ., դոցենտ Սարգիս Գրիգորյանը Արցախի պետական համալսարանում հանդես է եկել «Մերձավոր Արևելքի ներկայիս քաղաքական իրավիճակը» դասախոսությամբ:
3. Առկա հայագիտական համացանցային նախագծերի հետ համագործակցության ապահովման շրջանակներում «Հայագ» էլեկտրոնային հանրագիտարանում տեղադրվել է 31 անձանց վերաբերյալ կենսագրական տվյալներ, լուսանկարներ տարբեր կատեգորիաներում՝ ազատամարտիկներ, գնդապետներ, բժիշկներ, զեներալներ, բարերարներ, պետական գործիչներ, քաղաքագետներ, բանասիրական գիտությունների դոկտորներ, քաղաքական, հասարակական գործիչներ:
4. Կենտրոնում գործում է ընթերցասրահ, հայագիտական ուղղվածությամբ էլեկտրոնային գրադարան, որոնք համալրվում են նոր գրականությամբ և պարբերականներով: Զուգահեռ կազմվում է քարտարան:
5. Կենտրոնում շարունակական բնույթ է կրում Արցախի գյուղերի պատմությանը վերաբերող նյութերի հավաքագրումը:

### **ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ** **ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ** **Բաժնի պետ՝ Կազրամանյան Էրիկ Հենրիկի**

2019-2020 ուսումնական տարում համալսարանի 4 համակարգչային լսարաններն ապահովված էին ընդհանուր հաշվով 100 համակարգիչներով, 2 տպիչ սարքով, 4 պրոյեկտորով, և 1 սենսորային գրատախտակով: Դրանք, ինչպես նաև մի շարք լսարաններում համակարգիչների և պրոյեկտորների առկայությունը ապահովում են համալսարանի 5 ֆակուլտետների բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և հայցորդների համապատասխան ուսումնական պրոցեսները: Ինչպես նաև ըստ անհրաժեշտության լսարաններն ապահովվում են ուսումնական պրոցեսին անհրաժեշտ հավելյալ սարքավորումներով (պրոյեկտոր, տեսախցիկ):

Համալսարանում ապահովվել է լոկալ և գլոբալ ցանցերի, ցանցային սարքերի, սերվերների և տվյալների բազաների անխափան աշխատանքը, որը ընձեռել է համացանցից օգտվելու, նյութերի

տպագրման, դասախոսների կողմից տրամադրված ուսումնական և այլ նյութերից օգտվելու հնարավորություն և իրականացրել համալսարանի ներքին փաստաթղթաշրջանառության և կառավարման տեղեկատվական այլ համակարգերի աշխատանքները:

Հայտնաբերվել են վթարված համակարգչային տեխնիկայի խափանման պատճառները և ըստ անհրաժեշտության՝ վերանորոգվել, արդիականացվել, օպտիմալացվել և հզորացվել են համակարգչային տեխնիկան և սարքավորումները: Կատարվել են համակարգիչների համակարգային բլոկների մաքրման, պրոցեսորի ջերմային մածուկի փոխարինման, տեխնիկայաչես վնասված, այրված կամ այլ պատճառներով շարքից հանված դետալների, մեխանիզմների և ինտեգրալային սխեմաների ախտորոշման, վերանորոգման և փոխարինման աշխատանքներ:

Կատարվել են համալսարանի ծրագրային բազայի թարմացում, համակարգիչների օպերացիոն համակարգերի, ծրագրերի և ցանցային ծրագրային միջոցների թերությունների վերացման, սխալների շտկման, թարմացման և արդիականացման աշխատանքներ: Ուսումնասիրվել և ձեռնարկվել են քայլեր համակարգչային ցանցի, սարքերի և սարքավորումների, ու համակարգիչների տեխնիկական և ծրագրային անվտանգությունն ապահովելու նպատակով:

Համակարգչային կենտրոնների պատասխանատուների կողմից կատարվել են լաբորատոր աշխատանքների թարմացումներ և անհրաժեշտության դեպքում լաբորատոր աշխատանքների ժամանակ օգնություն է ցուցաբերվել ուսանողներին: Պարապմունքների ժամանակ ի հայտ եկած ծրագրային և տեխնիկական անսարքությունները գրանցվել և ժամանակին վերացվել են:

## ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

### *Բաժնի պետ՝ Հարությունյան Հասմիկ Նիկոլայի*

2019-2020 ուսումնական տարվա ընթացքում գրադարանային ֆոնդերը համալրվել են հիմնականում նվիրատվությամբ և համալսարանի կողմից գնված գրքերով: 2019-2020 ուսումնական տարվա համալրված գրականության 499/չորս հարյուր ինսուն ինն/ միավոր գրականություն ձեռք է բերվել կանխիկ՝ համալսարանի դրամական միջոցներով, որից զուտ գրքերը՝ 489 /չորս հարյուր ութսունինը/միավոր: Որպես նվիրատվություն մուտքագրել ենք 392/երեք հարյուր ինսուններկու/ միավոր գրականություն, որից 49/քառասունինը/ բրոշյուր և ամսագիր: Գրադարան մուտքագրված գրականության ցանկը տեղադրվել է համալսարանի ներքին ցանցում:

Համալրված գրականության հետ միասին, 2019-2020 ուսումնական տարվա վերջին, գրքային ունեցվածքը կազմում էր 86 414 /ութսունվեց հազար չորս հարյուր տասնչորս հազար/, զուտ գրքերը՝ 76.768/յոթանասունվեց հազար յոթ հարյուր վաթսուներեք/ միավոր:

2019-2020 ուստարում նվիրատվություններ են արվել անհատ հեղինակներից, Համազգային հայ կրթ.,մշակութային միության կողմից, ՀՀ կենտրոնական բանկի, Հայկազեան համալսարանի հայագիտական ամբիոնից, համալրված գրականության մի մասն էլ կազմում է բաժանորդագրությունը, նշված ժամանակահատվածում գրադարանը բաժանորդագրվել է 7/յոթ/ անուն թերթ:

Ընթերցողների կազմը. ընթերցողների ընդհանուր թիվը հաշվետու ուստարում կազմում էր 2045, որից ուսանողները՝ 1514, պրոֆեսորադասախոսական կազմը՝ 214, աշխատողները՝ 172,մագիստրանտները՝ 112, ասպիրանտները՝ 2, ոչ համալսարականներ՝ 31:

Ընթերցողների հետ աշխատանքներն ավելի ծավալուն են դառնում ուսումնական տարվա վերջին՝ կապված ավարտական քննությունների հետ, այդ թվում նաև տեղեկանքների տրման և պարտքատերերի հետ կապված աշխատանքները:

Նախօրոք բոլոր կուրսից կուրս փոխադրվողներին և ավարտական կուրսերին, հայտարարվել էր վերադարձնել գրադարանից վերցրած գրքերը:Հաշվետու ուսումնական տարում ավարտական կուրսերից ոչ մի պարտքատեր չի մնացել:

Գրադարանում գործում էր 2 ընթերցասրահ, որտեղ ընթերցողներին են տրամադրվել գրադարանում եղած գրքերի մեկական օրինակները և բաժանորդագրությունից ստացած թերթերը:Մշտական գործում են նոր ստացած գրականության ցուցադրական, «Մեր օրացույցը»,

«Օրվա պարբերականներ», «Տոն օրերին նվիրված», ինչպես նաև «Նշանավոր հոբելյաններ» ցուցատախտակները:

Պատրաստ և ներքին ցանցում տեղադրված է 2013թ.-ց մինչև 2019թ. ԱրՊՀ-ում հրատարակված գիտական տեղեկագրերի հոդվածների մատենագիտական ցանկերը հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակով: Ընթերցողները օգտվում են «Նրա մասին» քարտարանից, «Ազգային ազատագրական շարժումը Արցախում», «Հայոց ցեղասպանությունը» և «Գիտական հոդվածներ»-ի մատենագիտական ցանկերից:

*Գրադարանի հիմնական խնդիրներն են.*

1. Ընթերցողների գրական-տեղեկատվական սպասարկում՝ արդի գրադարանավարության չափանիշներով.

2. Գրադարանային ֆոնդերի շարունակական համալրում՝ համալսարանի ուսումնական և գիտահետազոտական գործընթացներին համապատասխան.

3. Տեղեկատու-մատենագիտական ապարատի կազմակերպում՝ տեխնիկական միջոցների և տեղեկատվության ժամանակակից ձևերի ու մեթոդների կիրառմամբ.

4. Աշխատանքային համագործակցություն համալսարանի կառուցվածքային ենթաբաժինների հետ

ԱրՊՀ գիտական գրադարանի հիմնական ֆունկցիաներն են.

1. ԱրՊՀ գրադարանի բաժանորդագրություն՝ ընթերցողական միասնական տոմսի միջոցով, որը ընթերցողին իրավունք է տալիս օգտվելու գրադարանի սպասարկման բոլոր բաժիններից, սպասարկման սահմանված բոլոր ձևերով.

2. Գրականության սպասարկում՝ ընթերցողների կազմին և պահանջարկին, ինչպես նաև գրադարանի առանձին բաժինների գործունեությանը համապատասխան՝ ընթերցասարահներում և գիտկաբինետներում.

3. Տեղեկատու-մատենագիտական սպասարկման իրականացում, ինտերնետային ծառայությունների կիրառում.

4. Նոր ստացված գրականության ցուցադրում, անմիջական օգնություն ընթերցողին՝ գրականությունը որոնելու, ընտրելու, տեղեկատու ապարատից օգտվելու գործընթացներում.

7. Գրադարանային ֆոնդերի ձևավորում և նպատակաւորված համալրում՝ համալսարանում գործող ուսումնական պլաններին, ծրագրերին և գիտահետազոտական թեմաներին համապատասխան.

8. Ֆոնդերի պարբերական վերլուծություն՝ ամբիոնների մասնակցությամբ, ուսումնական և գիտական գրականությամբ ապահովվածության ճշտում, վերահրատարակման ենթակա գրականության ընտրություն.

## ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

### *Միության նախագահ՝ Մեծլումյան Կարեն Բորիսի*

2019-2020 ուսումնական տարում արհեստակցական միության կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Կարիքավոր աշխատակիցներին ցուցաբերվել է դրամական օգնություն.

2. Հոբելյանական տարեդարձների առթիվ տրամադրվել է գումար.

3. Զոհված ազատամարտիկների ընտանիքներին տրամադրվել է նյութական օգնություն.

4. Ամառային հանգիստ կազմակերպելու նպատակով ընդունվել և բավարարվել են ստորաբաժանումների կողմից ներկայացված կոլեկտիվ հայտեր.

Նշված միջոցառումների իրականացման համար արհեստակցական միության բյուջեից ծախսվել է 3233000 (երեք միլիոն երկու հարյուր երեսուներեք հազար) հազար դրամ:

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԲԱԺԻՆ Բաժնի պես՝ Մեծույան Կարեն Բորիսի

2019-2020 ուս.տարում ՈՒՀՏԱԿ բաժնի կողմից մշակված և կյանքի կոչված ծրագրերն ու միջոցառումները նպատակաուղղված են եղել ԱրՊՀ 2019-2023թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մի շարք նպատակային խնդիրների իրագործմանն ու աշխատաշուկայում համալսարանականների մրցունակության բարձրացմանը:

Բաժնի նպատակն է օգնել ուսանողներին և շրջանավարտներին ճիշտ կողմնորոշվել աշխատաշուկայում, կարողանալ պատասխանել վերջինիս մարտահրավերներին և լավագույնս ներկայանալ գործատուին: Այդ նպատակով 2019-2020 ուս.տարվա ընթացքում բաժնին հաջողվել է կապ հաստատել բազմաթիվ կազմակերպությունների և համագործակցություն սկսել մի շարք գործատուների հետ, ինչպես նաև նախաձեռնել միջոցառումներ, որոնք նպաստել են բաժնի առջև դրված գործառնությունների իրականացմանը:

Հաշվետու տարում բաժինը զարգացրել է ձեռք բերած հաջողությունները: Ուսանողների շրջանում աշխատաշուկայի, աշխատանքի, գործատուների, թափուր աշխատատեղերի և այլ նմանատիպ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն է տարածվել կայք- էջի միջոցով:

Նախորդ ուս.տարում սկիզբ դրված ԱրՊՀ շրջանավարտների ուսումնասիրման գործընթացը շարունակություն է ստացել նաև հաշվետու տարում: Բաժնի կողմից մշակված «Ուսանողի անհատական թերթիկը» բաժանվել է շրջանավարտներին, լրացնելուց հետո ըստ ֆակուլտետների մուտքագրվել է բազա: Այնուհետև բազայի տվյալները օգտագործվել է աշխատանքային հայտերի, թափուր աշխատատեղերի առկայության ժամանակ:

Համալսարան-դպրոց կապն ամրապնդելու նպատակով բաժինը համագործակցության առաջարկ-հարցում է իրականացրել Ստեփանակերտ քաղաքի բոլոր միջնակարգ դպրոցների տնօրինների, փոխտնօրենների հետ: Արդյունքում՝ մի շարք դպրոցներ այս ուսումնական տարում դիմել են տարբեր մասնագիտությունների գծով մանկավարժներ տրամադրելու հարցով:

Բաժնի և «Միներջի» ընկերության համատեղ նախաձեռնությամբ բուհ-գործատու կապի ամրապնդման նպատակով ուսանողները մասնակցել են նշված ընկերության կազմակերպած «Ուսանողական շաբաթ» դասընթացին:

Կազմակերպվել է հանդիպում «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի հավաքագրման գծով բաժնի ղեկավար Գոռ Նազարյանի հետ:

ԱՀ ոստիկանության ծառայողները հանդիպել են մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստության ամբիոնի հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների հետ:

Հանդիպման նպատակն էր ոստիկանության համակարգում աշխատանքի ընդունվելու պահանջներին և կարգին ծանոթացնելը, աշխատանքի առաջարկ ներկայացնելը:

Բաժինը ուսանողներին և շրջանավարտներին պարբերաբար տեղեկացրել է թափուր աշխատատեղերի մասին:

Ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով կատարվել են հետևյալ աշխատանքները.

Ընդունվել և ընթացքավորվել են ուսանողական հանրակացարանում բնակվելու համար ներկայացված դիմումները.

Կազմակերպվել են հանդիպումներ առաջին կուրսեցիների հետ, կատարվել են իրազեկման աշխատանքներ.

Կատարվել են ուսանողների խնդիրների վերհանումներ՝ ԱրՊՀ ղեկավարության ուշադրության կենտրոնում պահելով նրանց իրավունքները.

Կատարվել է ուսանողների հասարակական ակտիվության միավորների հաշվարկում և կառավարում (առաջին կիսամյակի կտրվածքով):

### Հանդիպումներ

- Կազմակերպվել է ԱրՊՀ ռեկտորի հանդիպումը կամավորական աշխատանքներ իրականացրած ուսանողների հետ:

- Կազմակերպվել է «Դեմոկրատիան այսօր» ՀԿ-ի հիմնադիր Գյուլնարա Շահինյանի հանդիպումը ԱրՊՀ ուսանողների հետ:

- Ոչ ֆորմալ կրթության ծրագրով ուսանողների հետ հանդիպել է «Հայկենսաստեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի լաբորատորիայի վարիչ Նելլի Հովհաննիսյանը:
- Հայաստանի Ամերիկյան համալսարանի պատվիրակությունների ներկայացուցիչները հանդիպել են ԱրՊՀ ուսանողների հետ:
- ՀՀ զինվորական դատախազի տեղակալ Կարեն Աղաբեկյանը հանդիպել է ԱրՊՀ իրավագիտություն մասնագիտության մի խումբ շրջանավարտների հետ:

**Դասընթացներ**

- Դասախոսությամբ հանդես է եկել Կովկասի ինստիտուտի տնօրեն, քաղաքագետ Ալեքսանդր Բսկանդարյանը:
- ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլեչեր իրավագիտության և դիվանագիտության դպրոցի պրոֆեսոր Փոլ Արթուր Բերկմանը դասախոսությամբ հանդես է եկել Արցախի պետական համալսարանում:
- Դասախոսությամբ հանդես է եկել Արփինե Հովհաննիսյանը՝ «Մեդիա դաշտի իրավական կարգավորումներ» թեմայով:

**Միջոցառումներ**

- «Անկախության դաս»-ի կազմակերպում՝ Արցախի Հանրապետության ԱԺ-ում:
- «Մենք ենք, մեր սարերը» հուշակոթողի մոտ ԱրՊՀ ընդունված առաջին կուրսեցիների երդման արարողություն և տեսահոլովակի նկարահանում:
- «ԱրՊՀ 50-ամյակին» նվիրված միջազգային գիտաժողովի կազմակերպում և այցելություն Գանձասարի վանական համալիր:
- Ուսանողների միջազգային օրվան նվիրված մրցույթների և միջոցառումների կազմակերպում և ռեկտոր Ա.Սարգսյանի կողմից ակտիվ ուսանողների պարգևատրում:
- «Շրջակա միջավայրի պաշտպանության իրավունք» թեմայով միջազգային դատախազի կազմակերպում:
- Բանավեճ-քննարկման կազմակերպում՝ ԱրՊՀ «Բանավեճի ակումբ»-ի կողմից:
- Հաշվապահի միջազգային օրվան նվիրված միջոցառման կազմակերպում ԱրՊՀ-ում:
- Այցելություն գործառնաբան, համերգային ծրագրեր:
- Այցելություն ՀՀ Տավուշի մարզի Այգեպար գյուղի մանկապարտեզ:
- Կայացել է «Բարձրագույն կրթություն: Մարտահրավերներ և լավարկման ուղիներ» խորագրով վեբինար-քննարկում:
- Ամառվա ընթացքում ԱրՊՀ ուսանողները կամավոր հիմունքներով պարբերաբար հանրօգուտ աշխատանքներ են իրականացրել Պատարա գյուղում գտնվող ԱրՊՀ ճամբարի տարածքում:

Այսպիսով, 2019-20 ուսումնական տարում, չնայած երկրում տիրող համաճարակային իրավիճակին, բաժինը իրականացրել է բազմաթիվ խնդիրների լուծման համալիր գործողություններ՝ կազմակերպելով մի շարք հանդիպումներ, դասընթացներ, միջոցառումներ, որոնք մեծամասամբ ամրապնդել են համալսարանի կապը պետական կառույցների, այլ ուսումնական հաստատությունների, գործատուների և այլ համակարգերի հետ, նպաստել ուսանողների ակտիվ մասնակցությանը հասարակական աշխատանքներին:

**ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**  
*Բաժնի պետ՝ Սառաջյան Զարինե Գարեգինի, Բ.Գ.Թ., դոցենտ*

Հանրային կապերի և լրատվության բաժինը գործում է 2018 թվականից: 2019-2020 ուսումնական տարում բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով:

**Հանրային կապեր:** Այս ուղղությամբ բաժինն իրականացրել է աշխատանքներ, որոնք ուղղված են եղել ԱրՊՀ գործունեության և նրա վարկանիշի բարձրացմանը, տեղեկատվական և քարոզչական բնույթի միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը, նպաստել հանրային նշանակության տարաբնույթ միջոցառումների (այդ թվում՝ տոն օրերին նվիրված միջոցառումների, համաժողովների, հավաքների, երթերի) կազմակերպմանը, հանրապետության սահմաններում և դրանից դուրս գործող ուսումնակրթական հաստատությունների հետ

համագործակցային կապերի հաստատմանն ու ամրապնդմանը, համատեղ միջոցառումների կազմակերպմանը, հանրապետության երիտասարդական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցային ծրագրերի իրականացմանը: Բաժինը համագործակցում է ԱՀ-ում գործող տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների և անհատ լրագրողների, ինչպես նաև տարբեր բուհերի ուսանողների հետ տարվող աշխատանքների, այլ կառույցների հանրային կապերի և լրատվության բաժինների հետ:

**Լրատվություն:** Այս ուղղությամբ բաժինն իրականացրել է աշխատանքներ, որոնք նպաստել են ԱրՊՀ ինտերնետային ռեսուրսների ակտիվացմանը, պաշտոնական կայքի զարգացմանը, սոցիալական-տեղեկատվական ցանցերում ներկայացվածությանը, հետադարձ կապի ապահովմանը, «Արցախի համալսարան» պաշտոնաթերթի, «Քո ժամանակը» ուսանողական ամսաթերթի, ԱրՊՀ մասին պատմող տեսանյութերի, լուսանկարների և տպագրական նյութերի ստեղծմանն ու տարածմանը: Իրականացվել է տպագիր և էլեկտրոնային մամուլում ԱրՊՀ անդրադարձների դիտարկում, վերլուծություն և տեղայնացում, «Արցախի համալսարան» և «Քո ժամանակը» թերթերի տարածումը ԱՀ, ՀՀ համապատասխան կառույցներում, համալսարանի ֆակուլտետներում և ստորաբաժանումներում: Պարբերաբար կատարվել են անհրաժեշտ իրազեկման աշխատանքներ:

## ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

### Կենտրոնի տնօրեն՝ Գասպարյան Անահիտ Էդուարդի

2019-2020 ուսումնական տարում ԱրՊՀ հոգեբանական կենտրոնում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

#### 1. Տեսական և պրակտիկ դասընթացներ, թրեյնինգներ

2019թ. սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 5-ը ք. Երևանի «Անիմա» հոգեբանական կենտրոնի պրակտիկ հոգեբան Արմինե Ադամյանի կողմից կազմակերպվել է դասընթաց «Տագնապային խանգարումներ» թեմայով, որին մասնակցել են ԱրՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ, դասախոսներ, կենտրոնի աշխատակիցներ, հոգեբանության ինդիվիդուալ հետաքրքրվող անձինք: Մասնակիցներին տրվել են հավաստագրեր:

2019թ. նոյեմբերի 29-ին կենտրոնում հյուրընկալվել են Երևանի «ԻՆԹՄԱ» հոգեկան առողջության կենտրոնի տնօրեն Մելինե Թովմայանը և հոգեբան Անի Ազիզյանը: Նրանց կողմից կազմակերպվել է սեմինար-պարապմունք՝ «Կախյալություն, փոխկախյալություն և ակնհայտիվ» թեմայով:

2019թ. դեկտեմբերի 2-ից մինչև 6-ը կենտրոնում դասընթացներ է վարել հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ դասախոս, «Անիմա» հոգեբանական կենտրոնի հիմնադիր-տնօրեն Վլադիմիր Միքայելյանը: Նա հանդես է եկել «Հոգետոմատիկա», «Ֆ. Ալեքսանդրի, Վ. Դամբարի, Մ. Շուրի տեսությունները», «Հոգեբանական բարդություններ», «Երազների հոգեվերլուծական տեսության հիմնական դրույթները» թեմաներով:

2020թ. փետրվարի 19-ին ՈԻՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը հանդես է եկել դասախոսությամբ՝ «Հոգեբանական աշխատանքի կազմակերպումը և բովանդակությունը» թեմայով: Հանդիպմանը ներկա էին մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դասախոսներ, ուսանողներ:

#### 2. Կենտրոնի զարգացմանն ուղղված միջոցառումներ

2019թ. սեպտեմբերի 19-ից կենտրոնը ամենամյա աշխատանքներ է իրականացրել առաջին կուրսեցիների հետ, որի նպատակը ուսանողներին հոգեբանական օգնություն և աջակցություն ցուցաբերելն ու ուսանողական խմբերում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումն է:

2019թ. հոկտեմբերի 16-ից մեկնարկել է «Պոզիտիվ» հոգեբանական ակումբի գործունեությունը, որի նպատակը ուսանողների անձնային աճի զարգացման և ինքնիրացման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է:

2019թ. հոկտեմբերի 16-ից 21-ը ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի զարգացման ծրագրով նախատեսված ուսանողների պարբերական վերապատրաստման նպատակով մի խումբ



ուսնողներ մասնակցել են ք.Երևանի «Ժեստ» հոգեբանական կենտրոնի կողմից կազմակերպված պրակտիկ դասընթացներին:

Կենտրոնում հետևողական աշխատանքներ են իրականացվել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների գիտահետազոտական աշխատանքների (դասընթացային-գիտական, ավարտական, մագիստրոսական թեզ) կատարմանը նպաստելու ուղղությամբ: Ուսանողները օգտվել են կենտրոնում առկա անհրաժեշտ մասնագիտական գրականությունից:

**3. Համագործակցության զարգացում**

2019թ. նոյեմբերի 21-ին մի խումբ ուսանողներ գործուղվել են Շուշիի «Շող» ցերեկային համայնքահեն կենտրոն, որտեղ 8-ից մինչև 10 տարեկան երեխաների հետ անձնային աճին և հոգեբանական զարգացմանը նպաստող գործիքակազմի միջոցով անց են կացրել երեխաների մտավոր զարգացումը գնահատող դիագնոստիկա:

2019թ. նոյեմբերի 25-ից 27-ը կազմակերպվել են ՊԲ սպա-հոգեբանների վերապատրաստման հերթական հավաք-դասընթացները:

2019թ. նոյեմբերի 28-ին մի խումբ մագիստրանտներ և հոգեբաններ գործուղվել են Ասկերանի շրջանի գ. Նորագյուղ: Նրանք այցելել են Վ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց և հանդիպում ունեցել տնօրինության, դասղեկների, դասավարների և բարձր դասարանների աշակերտների հետ:

2019թ. դեկտեմբերի 5-ին Վլադիմիր Միքայելյանը հանդիպել է ԱՀ դպրոցների հոգեբանների, հատուկ մանկավարժների, սոցիալական մանկավարժների, լոգոպեդների հետ: Ներկաները քննարկել են ոլորտում առկա խնդիրները՝ փորձելով գտնել դրանց առաջացման պատճառները և լուծման տարբերակները: Մասնավորապես, քննարկել են դեռահասների ագրեսիվության պատճառները և տարիքային առանձնահատկությունները:

2020թ. մայիսի 11-ից մինչև 23-ը բակալավրիատի «Հոգեբանություն-3» կուրսի ուսանողների համար կազմակերպվել է ակտիվ հոգեբանական փորձառություն:

2020թ. մայիսի 18-ից մինչև 20-ը կազմակերպվել են ՊԲ սպա-հոգեբանների վերապատրաստման հերթական հավաք-դասընթացները:

2020թ. մայիսի 25-ից մինչև 29-ը ՀՀ ք. Երևանի «Ժեստ» հոգեբանական կենտրոնը ԱրՊՀ ուսանողների համար կազմակերպել է օնլայն դասընթաց՝ «Քննական սթրես: Ինչպե՞ս հաղթահարել», «Ելույթ ունենալու վախ: Ինչպե՞ս հաղթահարել», «Հիշողության զարգացման մեթոդները», «Ինքնաճանաչման գործիքներ» թեմաներով:

**4. Միջոցառումներ՝ նվիրված նշանավոր մարդկանց, տոն և հիշարժան օրերին**

2019թ. հոկտեմբերի 10-ին հոգեկան առողջության օրվա առթիվ կազմակերպվել է միջոցառում «Տագնապ» թեմայով:

2019թ. հոկտեմբերի 14-ին լոգոպեդի միջազգային օրվա կապակցությամբ հոգեբանություն 1-ին և 3-րդ կուրսերի ուսանողների համար կազմակերպվել է այցելություն Հովհ. Թումանյանի անվան համար 9 հիմնական դպրոց՝ ծանոթանալու դպրոցում իրականացվող լոգոպեդական աշխատանքներին: Ուսանողները հանդիպումներ են ունեցել լոգոպեդ, հատուկ մանկավարժ Ս. Հայրապետյանի, լոգոպեդ Ս. Արզումանյանի, սուրդոմանկավարժներ Գ. Գաբրիելյանի և Դ. Բաղդասարյանի հետ: Ս. Հայրապետյանը ներկայացրել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքներին և գործնական պարապմունքի միջոցով ավելի մատչելի դարձրել այն ուսանողների համար:

2019թ. նոյեմբերի 22-ին կազմակերպվել է միջոցառում նվիրված հոգեբանի օրվան: Միջոցառման ընթացքում ուսանողները հանդես են եկել ելույթներով՝ խոսելով հոգեբանի գործառնություններից, որակներից, ոլորտի նրբություններից, հոգեբանական խնդիրներից և դրանք լուծելու մեթոդներից:

2019թ. նոյեմբերի 27-ին ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ուսանողների նախաձեռնությամբ Շուշիի «Շող» համայնքահեն կենտրոնի սաների համար կազմակերպվել է միջոցառում՝ «Բարությունը կփրկի աշխարհը» խորագրով:

2020թ. մարտի 12-ին կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված ավստրիացի նշանավոր հոգեբան և հոգեբույժ, անհատական հոգեբանության հիմնադիր Ալֆրեդ Ադլերի 150-ամյակին: Միջոցառմանը ներկա էին դասախոսներ, ուսանողներ և Վ. Ջհանգիրյանի անվան համար 11 ավագ դպրոցի ավարտական դասարանների աշակերտներ:

**5. Անհատական և խմբային խորհրդատվություններ, շտկողական և թերապևտիկ աշխատանքներ**



Անհատական խորհրդատվություն ստանալու նպատակով կենտրոն են դիմել 56 հոգի՝ հետևյալ խնդիրներով.

- վախ,
- ագրեսիվություն,
- տագնապայնություն,
- ներանձնային կոնֆլիկտներ,
- սթրեսներ, դեպրեսիա և այլն:

### **ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Նախագահ՝ Մարգարյան Լիլիթ Սուրենի**

ԱրՊՀ ուսանողական խորհուրդը /ՈւԽ/ գործունեությունը իրականացնում է իր Կանոնադրությանը համապատասխան՝ ակտիվորեն համագործակցելով ՈւՇՀՀՏԱԳ պրոռեկտորի, ՈւՀՏԱ և Կարիերայի բաժնի, ԱրՊՀ այլ ստորաբաժանումների հետ:

Ուսանողական խորհրդի 2019-2020 ուսումնական տարվա հաշվետվությունը կազմված է ֆակուլտետների ուսանողական խորհուրդների /ՖՈՒԽ/ հաշվետվությունների հիման վրա: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետներում զգալի աշխատանքներ են կատարվել ուսանողների ուսումնագիտական գործունեությունն ու ակտիվ ստեղծագործական կյանքը բովանդակալից դարձնելու ուղղությամբ, կազմակերպվել են բազմաթիվ ուսումնական, մարզամշակութային և ժամանցային միջոցառումներ, որոնց մասնակցել են մեծ թվով ուսանողներ:

Կարևոր միջոցառումներից են պարբերական հանդիպումներն ու քննարկումները, որոնցից կարելի է առանձնացնել ԱրՊՀ ՈւԽ և ՖՈՒԽ-երի ներկայացուցիչների հանդիպումները ԱրՊՀ ղեկավարության հետ, որի ընթացքում քննարկվել և իրենց լուծումներն են ստացել ուսանողական կարևոր հարցեր:

Ուսումնական տարվա սկզբին «Մենք ենք մեր սարերը» հուշակոթողի մոտ կազմակերպվել է առաջին կուրսեցիների երդման հանդիսավոր արարողությունը: Բոլոր ֆակուլտետների ՖՈՒԽ-երը կազմակերպել են ավանդական դարձած ծանոթության երեկոներ՝ նպատակ ունենալով ավագ կուրսեցիների փորձն ու օրինակը ճանաչելի դարձնել:

Առաջին կուրսեցիներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու նպատակով ՖՈՒԽ-երի կողմից բոլոր ֆակուլտետներում կազմակերպվել են նաև ինտելեկտուալ խաղեր, որոնց հաջորդել է միջֆակուլտետային փուլը:

Հոկտեմբերի 5-ին ՈՒԽ նախաձեռնությամբ բոլոր ֆակուլտետներում յուրահատուկ ձևով շնորհավորել են դասախոսական կազմին:

Հոկտեմբերի 15-ին և 17-ին կազմակերպվել է միջֆակուլտետային ֆուտբոլի առաջնություն՝ նվիրված ԱրՊՀ 50-ամյակին:

Ուսանողների միջազգային օրվա և Արցախի մայր բուհի 50-ամյակի կապակցությամբ հայտարարվել են ուսանողական տարաբնույթ մրցույթներ, որի համակարգման աշխատանքներին ակտիվ մասնակցել են ՖՈՒԽ-երը: ԱրՊՀ ՆԶՊ և ՖԴ ամբիոնի և ՈւԽ համատեղ ջանքերով կազմակերպվել է հրաձգության մրցույթ, որին մասնակցել են 5 ֆակուլտետներից հավաքական թիմեր, որոնք մրցել են խմբային ու անհատական մրցապայքարում:

Նոյեմբերի 3-ից 5-ը ԱրՊՀ-ում կայացել է ուսանողական միջազգային գիտաժողով՝ նվիրված մայր բուհի կազմավորման 50-ամյակին: Ուսանողական խորհուրդը ևս իր ակտիվ մասնակցությունն է ունեցել եռօրյա գիտաժողովի կազմակերպման աշխատանքներին:

Նոյեմբերի 16-ին ՈւԽ և ՈւԳԸ համատեղ նախաձեռնությամբ տեղի է ունեցել միջֆակուլտետային ինտելեկտուալ խաղ, որին մասնակցել են բուհի բոլոր ֆակուլտետները ներկայացնող թիմեր:

Նոյեմբերի 18-ին ԱրՊՀ ղեկավար Ա. Մարգարյանի հրամանով պատվոգրերով, գովասանագրերով, շնորհակալագրերով, դրամական պարգևներով և գրքերով խրախուսվել են ուսանողության օրվա կապակցությամբ կազմակերպված մրցույթներում հաղթող ճանաչված ուսանողները,

ուսումնական, գիտական, հասարակական ակտիվություն ցուցաբերած, մարզական նշանակալի ձեռքբերումներով առանձնացած, ինչպես նաև ըստ մասնագիտությունների բարձր ուսումնական առաջադիմություն և պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողները:

Ուսանողների միջազգային տոն օրվա առթիվ ԱրՊՀ ուսանողական խորհրդի ֆինանսավորմամբ շուրջ 500 ուսանողի հնարավորություն է ընձեռնվել դիտելու թատերական ներկայացումներ:

Նոյեմբերի 21-ին ԱրՊՀ «Բանավեճի ակումբ»-ի կողմից կայացել է բանավեճ-քննարկում: Հանդիպումը նախաձեռնել են ԱրՊՀ ՈՒՀՏԱ և կարիերայի բաժինը և ուսանողական խորհուրդը:

Ուսանողական խորհուրդն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել նաև քննաշրջանի ընթացքը պատշաճ կազմակերպելու գործում:

Հունվարին հանդիպում է կազմակերպվել հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերող հարցեր, ինչպես նաև նրանց կողմից բարձրացված խնդիրների տրվել են համապատասխան լուծումներ:

Ռեզումեները հասարակական դաստիարակության կարևորությունը միշտ էլ գերակայել է ՈւՄ որդեգրած գործելաճում: Բուհ-բանակ կապի ամրապնդման նպատակով Հայրենյաց պաշտպանի տոնին ընդամառ մի խումբ ուսանողներ այցելել են Ռ գործարան: Ուսանողները շրջայց են կատարել գործարանի տարածքում, ծանոթացել զինվորների առօրյային և պայմաններին, հանդես եկել ազգագրական կատարումներով՝ զինծառայողների օրը դարձնելով տոնական:

ՈւՄ, ՈւԳԸ, ՈւՀՏԱ և Կ բաժնի համատեղ ջանքերով կազմակերպվեց և անց կացվեց միջֆակուլտետային ինտելեկտուալ խաղ-մրցույթ՝ նվիրված կանանց և աղջիկների միամսյակին: Մրցույթին իրենց մասնակցությունը ունեցան յուրաքանչյուր ֆակուլտետից մեկական թիմ: Խաղի մասնակիցների ուրախ, մարտի 8-յան տրամադրությունը ապահովվեց անակնկալի տեսքով ծաղիկներ նվիրելով:

Մարտի 11-ին ԱրՊՀ ռեկտոր Ա. Սարգսյանը հանդիպում է ունեցել ուսանողական կառույցի ներկայացուցիչների հետ, քննարկել ընթացիկ և նախատեսվող մի շարք աշխատանքներ, ուսանողներին իրազեկել է հավատարմագրման և մի շարք այլ կարևոր գործընթացների մասին, ծանոթացել ուսանողներին հուզող խնդիրներին, լսել նրանց առաջարկությունները:

Համավարակի պատճառով ապրիլի 6-ից ԱրՊՀ-ն անցել է հեռավար ուսուցման համակարգի: ՈւՄ նախաձեռնությամբ օնլայն տարբերակով անանուն հարցում է անցկացվել ուսանողների շրջանակներում՝ ծագած խնդիրները համակարգելու և լուծումը գտնելու համար:

Բոլոր ֆակուլտետների կողմից տեսահոլովակներ են պատրաստվել, թե ինչպես կարելի է արդյունավետ անցկացնել տանը մնալու ժամանակը:

Հուլիսի 17-ին ՈւՄ-ն հանդես է եկել ուսանողական նախաձեռնությամբ Տաուշի մարզի Այգեպարի մանկապարտեզի երեխաներին խաղալիքներով, գրենական պիտույքներով և այլ անհրաժեշտ իրերով օգնելու համար:

Ընթացիկ տարում կազմակերպվել են մի շարք երթեր, էքսկուրսիաներ, արշավներ:

Ուսանողական խորհրդի ուշադրության առանցքում է եղել սոցիալապես անապահով, ինչպես նաև հանրակացարանաբնակ ուսանողների խնդիրները: Ուսման վարձավճարի գեղչման տեսքով նյութական օգնություն են ստացել տասնյակ ուսանողներ:

ՈւՄ մշտական հանձնաժողովները որոշակի աշխատանքներ են կատարել իրենց վստահված ուղղություններով:

Ուսանողական խորհուրդն ակտիվ համագործակցել է ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության, Արցախում գործող հասարակական կազմակերպությունների և տարբեր բուհերի ինքնավար կառույցների հետ: Հաշվետու ուսումնական տարում ավելացել է ակտիվ ուսանողների քանակը: Վերոնշյալ բոլոր միջոցառումներին մեծապես աջակցել է ՈւՀՏԱ և Կարիերայի բաժինը, ինչպես նաև համալսարանի ղեկավարությունը:

**ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**  
**Նախագահ՝ Գասպարյան Աննա Լավրենտի**

Առաջնորդվելով 2019-2020թթ. ուսումնական տարվա աշխատանքների ծրագրով՝ ՈւԳԸ-ն ակտիվորեն աշխատանքներ է տարել մի շարք ուղղություններով

1. Սեպտեմբեր ամսից կայացվել են ամենամսյա ՈւԳԸ նիստեր, որտեղ քննարկվել են ՈւԳԸ ծրագիրը, ՖՈՒԳԸ աշխատանքային պլանները:

2. Հոկտեմբեր ամսից սկսվել են ԱրՊՀ 50-ամյակին նվիրված գիտաժողովի նախապատրաստական աշխատանքները, յուրաքանչյուր ֆակուլտետի տրվել են հստակ առաջադրանքներ:

3. Կազմակերպվել են սեմինար-դասընթացներ՝ «Ինչպե՞ս գրել գիտական հոդված» թեմայով, որն իրականացվել էր նաև նախորդ ուսումնական տարում: Հաշվի առնելով մասնագիտությունների առանձնահատկությունները՝ սեմինար-դասընթացները կազմակերպվել են ֆակուլտետներում առանձին-առանձին և ունեին ճանաչողական-բացատրական նշանակություն:

4. Նոյեմբերի 3-5-ը կազմակերպվել է Արցախի մայր բուհի 50-ամյակին նվիրված ուսանողական միջազգային գիտաժողովը, որին մասնակցում էին ավելի քան 150 ուսանող Արցախի, Հայաստանի և արտասահմանյան բուհերից:

5. Նոյեմբերի 16-ից ուսանողների միջազգային օրվան նվիրված ֆակուլտետներում կազմակերպվել են ինտելեկտուալ խաղ-մրցույթներ:

6. Դեկտեմբեր ամսից ֆակուլտետների միջև կազմակերպվել են ինտելեկտուալ խաղեր՝ սերտ համագործակցելով ուսանողական խորհրդի կազմի հետ:

7. Հունվար-փետրվար ամիսներից սկսվել են ԱրՊՀ 50-ամյակին նվիրված գիտաժողովի հոդվածների խմբագրման աշխատանքները, որին ՖՈՒԳԸ նախագահները ակտիվորեն մասնակցում էին:

8. Փետրվարի 25-ին պատմության և իրավագիտության ՈՒԳԸ նախաձեռնությամբ կազմակերպվել էր գիտական սեմինար, որի նպատակն էր 2-րդ կուրսեցիների շրջանում ներկայացնել կուրսային աշխատանք գրելու պայմանները և կարգը:

9. Մարտի 11-ին Արցախի պետական համալսարանում ՈւԽ, ՈւԳԸ, ՈւՀՏԱ և Կարիերայի բաժնի հետ համատեղ ջանքերով կազմակերպվել և անց է կացվել միջֆակուլտետային ինտելեկտուալ խաղ-մրցույթ՝ նվիրված կանանց և աղջիկների միամսյակին:

10. ՈւԳԸ-ն սերտ համագործակցում է ՈւԽ կազմի հետ տարբեր կազմակերպչական աշխատանքներում:

11. Մայիս ամսին հրավիրվել է ՈւԳԸ նիստ, որտեղ քննարկվել է հաջորդ ուսումնական տարվա անելիքները, ներկայացվել են հաշվետվությունները, քննարկվել են առկա թերությունները և դրանց վերացմանն ուղղված անելիքները:

**ԲՈՒՇԿԵՏ**

**Վարիչ՝ Պետրոսյան Ռոմելլա Զինավուրի**

2019-2020 ուսումնական տարում բուժկետ են հաճախել 1819 մարդ, որից 504 ուսանող, 1315 աշխատող: Հաճախորդների թիվը 2018-2019 ուսումնական տարվա համեմատ նվազել է 907-ով, ինչը պայմանավորված է տարածված համավարակի պատճառով ուսումնական գործընթացի հեռավար կազմակերպմամբ:

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՅԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
ԱՐՅԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

---

---

*Ծավալը 17,5 տպ. մամուլ: Տպարանակ 100:*

Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5  
հեռ.՝ (0749) 4-04-91, ֆաքս՝ (0479) 7-12-14  
E-mail: [rector@asu.am](mailto:rector@asu.am)

ԱրՊՀ հրատարակչություն, e-mail: [printery.asu@mail.ru](mailto:printery.asu@mail.ru),  
կայք: [www.asu.am](http://www.asu.am)

Арцахский государственный университет  
г.Степанакерт, ул. Мхитара Гоша 5,  
тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14  
Издательство АрГУ, e-mail: [printery.asu@mail.ru](mailto:printery.asu@mail.ru),  
сайт: [www.asu.am](http://www.asu.am)

Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert  
Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14  
ASU Publishing house, e-mail: [printery.asu@mail.ru](mailto:printery.asu@mail.ru),  
website: [www.asu.am](http://www.asu.am)

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

**ԷԴԻԹ ՊՐԻՆՏ**  
Երևան, Բումանյան 12  
հեռ.՝ (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)



**EDIT PRINT**  
12 Toumanyanyan str., Yerevan  
Tel.: (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)